

ՌՈՒԲԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ

VII

Վերադարձ ժընեւ .— Ո . Խանազատ .— Կաթուղիկոսական քեկնածուի հայրցը մամուլում .— Ընկերվարական հայերէն առաջին գրքոյների հրատարակութիւնը :

Սեպտեմբերի կչուրին Մոսկուայի ճանապարհով , որտեղ մնացի 2 - 3 օր , վերադառնում եմ ժընեւ : Այստեղ լինձ սպասում էին մի շարք նորութիւններ :

Նախ՝ իմանում եմ , որ «Հնչակ»-ի հիմնադիրներից մէկը՝ Շմաւոն (իսկական անունով Կաֆեան) , որ Արարկիր էր գնացած ու մի քանի ամիս այստեղ յեղափոխական կազմակերպչական գործով էր զբաղւած , ձերբակալել է : Նա ունէր պարսկահպատակի անցադիր , Արարկիրի վարժարանի տնօրէն - ուսուցչի պաշտօն էր ստանձնած եւ տեղային երիտասարդների օգնութեամբ գտաւոր կապել էր մօտակայ ծովափնեայ քաղաքի հետ : Ժընեւի կենորոնք , ի հսրկէ , մտահոգւած էր , որ մի քանի ամիսների ընթացքում ձեռք բերւած յեղափոխական ցանցերը կարող են մի հարւածով կարւել . թէեւ յոյս կար , որ Շմաւոնին իբրեւ «պարսկահպատակի» , աղատ թողնեն (իրավէս Շմաւոնը զարարազցի էր եւ ուսուահպատակ) :

Ժընեւ էր վերադարձել եւ Ռուբէն Խանապատր , որին ես առաջին անգամն էի պատահում , թէեւ շատ բան լսած էի նրա եռանդուն գործունէութեան մասին : Երեւանցի էր , համեստ ընտանիքի միակ զաւակը , առողջութեամբ թոյլ ու կուղ . միջնակարգ ուսումը ստացել էր Վալադիկաւեկաղի Ռէտալական դպրոցում , որից յետոյ մտել էր Մոնղէլիէ համալսարանը : Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից էր , և անդուն եւ համարձակ , յեղափոխականի խառնւածքով , բայց երբեք «տաքարիւն եւ գլուխիր կորցնող» . ընդհակառակը՝ ամենանեղ վիճակում դիմէր արտաքուստ իբրեն սառն եւ իբրե թէ «անտարրեր»

ձեւացնել։ Ունէր գործիչի նախաձեռնութիւն եւ չեր սիրում վճռած հարցերը երկարօրէն թողնել չիրականացած։ 1889 թ. Պոլիս էր անցել, ուր կազմակերպել էր Գում Գափուի ցոյցը 1890 թ. Յուլիսի 15-ին եւ նախընթաց օրը հեռացել էր Պոլսից։ Հետագայ ամիսներում՝ լիազօրւած էր Հնչակի կենտրոնի կողմից բանակցելու Հ. Դ. Յեղափոխականների հետ «Միութեան» հարցի առթիւ։ Միշտ դւարթ ու լաւատես, միշտ ընկերական մթնոլորտ ստեղծող՝ անվերջ պատմում էր Պոլսում, Տրավիգոնում եւ Թիֆլիսում իր պատահած աղջային դէմքերի մասին — ծիծաղաշարժ պատմութիւններ, բայց առանց չարութեան կամ չարակամութեան։ Թերեւս, եթէ զրականութեամբ զբաղւէր, երդիծական գեղեցիկ պատմւածքներ գրէր . . .

Անման էր նրա պատմութիւնը, թէ ինչպէս մի քանի ամիս առաջ, ծպտեալ եւ «Եշան Կարափետեան» կեղծանունով, զնացել էր Երուսաղէմ, տեսնել էր այնտեղ աքսորւած Խրիմեան Հայրիկի հետ, առաջարկել էր փախցնել նրան Եւրոպա՝ խնդրելով, որ Խրիմեանը անցնէ հայ յեղափոխութեան գլուխը եւ միացնէ ու կենտրոնացնէ բոլոր յեղափոխական ոժերը։ Փորձում էր համոզել, որ միայն այդ միջոցով կարելի էր հարփերապատկել ուժերը եւ մեծ զարկ տալ յեղափոխական գործին։ Պատմում էր նոյնպէս, որ Խրիմեանը առարկել էր, թէ «ինքը ծեր է այդ տեսակ արկածների համար», թէ «իր ամսականը պիտի կտրեն, եթէ ատանկ քայլերի դիմէ, ու ո՞վ դև պիտի ապահովացնէ», *) ու հարցել էր . . . «Զե՞ս կարծեր, որ տղդիս օգտակար ըլլամ ուրիշ ճամբով մը» :

Իմ ստացած տողաւորութիւնն այն էր, որ Խրիմեանը ոչ թէ վախենում էր ամսական թոշակից կտրւելուց, այլ հաւատում էր, որ նորան կարող են Կաթուղիկոս ընտրել եւ այնտեղ ամրացած, թերեւս «բան մը կրնար ընել» :

Պէտք է ասեմ, որ գետ Ռուսաստանում, վերջին ամիսները, յաճախ ինձ հարցնում էին. «Ի՞նչ էք կարծում, եթէ Խրիմեանը Կաթուղիկոս ընտրեի, յեղափոխական գործը աւելի^o յաջողութեամբ կրնմանայ» :

Խրիմեանի, իրրեւ կաթուղիկոսացուի, թեկնածութեան հարցը գնալով աւելի եւ աւելի կլանում էր հայութեան ուշադրութիւնը.

*) Սյս «ամսական»-ի պատմութիւնը Ռ. Խանազատը իր յուշերի մէջ էլ արել է։ Անհաւտալի է, որ Խրիմեանը լրջօրէն խօսած լինի ամսականի մասին. նա պարզապէս ձեռք է արել երիտասարդ Խանազատին։

ամբողջ աշուն եւ ձմեռ թիֆլոսի բոլոր հայ թերթերը զբաղւած էին այդ հարցով. մինչեւ իսկ Պոլսի թերթերը երկար սիւնակներ էին նըւիրում նրան: Մենք զգում էինք, որ հայ հասարակութեան ուշաղը ըստթիւնը հեռանում է զուտ յեղափոխական բնոյթ կրող հարցերից. այդ բանը ինձ խիստ ջզայնացնում էր, եւ յաճախ այդ երեւոյթին էի վերապառնում ժընելի մեր զրոյցների ժամանակ, բայց Ու Խանաղատը, ծիծաղելով ու ձեռքը ուսկի զարնելով, ասում էր. «ՄԵՇ ՎՐԴ-ԳՈՎԱԿԻՐ, ԹՈՇ ԸՆՏՐԵՆ. միեւնոյն է՝ պիտի հիասթափւեն, ու այն ժամանակ աւելի մեծ եռանդով ու հաւատով կը դիմեն միակ ճանապարհն՝ յեղափոխական գործին»: Նաղարբէկը շարունակում էր արհամարհանքով խօսել թիֆլոսի «բուրգուական մամուլի» մասին, որ իր «բան - գործն է արել տիրացուական հարցով զբեղեց ու զբացնել»: Ես համաձայն չէի նրանց հետ, թէ, իբր թէ, «ամենալաւը լուելն է, կաթուղիկոսի ընտրութիւնների առթիւ»: Մի օր էլ, երբ միաժամանակ ձեռքս էին ընկել «Մուրճ»-ը, «Մշակ»-ը եւ «Նոր - Դար»-ը, որոնց սիւնակները լցւած էին կաթուղիկոսի եւ եկեղեցական բարենորոգումների հարցերով, մի յօդւած գրեցի եւ յանձնեցի Նաղարբէկին, որ «Հնչակ»-ի մէջ զետեղէ իբրեւ «Կովկասից ստացած թղթակցութիւն»: 48 տարիներ յետոյ չեմ յիշում յօդւածը ամբողջութեամբ, բայց մի քանի տողերը վերյէչելով՝ կարող եմ մէջ բերել. զրում էի՝ «Երբ թրքահայաստանում վասողի հոռ ենք զգում օդում, ժամանակը չէ եկեղեցու բարեկարգութեան հարցերով զբաղւել. Հայութիւնը զրազեցնում են կաթուղիկոսական հարցերով, կարծես թէ՝ ամենալաւ բարենորոգումները այօր, 19-րդ զարու վերջերին, կարող են քաղաքականապէս բանարարւած ժողովուրդին արզատութիւն տալ. թողէ՛ք եկեղեցին եկեղեցուն. թողէ՛ք կաթուղիկոս կոչւած մումիան մնայ իսկական իր տեղը՝ եկեղեցու պատերի մէջ. Հայ ժողովուրդը աւելի մեծ պահանջներ ունի, հրատապ եւ օրհասական»: Ու գիմելով կովկասահայ մամուլին՝ աւելացնում էի. «Ունեցէ՛ք ուղղակի վէրքերի վրա ձեռք դնելու քաղաքացիական արիւթիւնը»:

Նաղարբէկը կարդում է յօդւածս, ջնջում է բոլոր պատահած «մը» մասնիկները, ու ասում է. «Գիտե՞ս ինչ. Ես կը հանեմ քո զործածած մի քանի խիստ մակդիրները, եւ յօդւածը կը զետեղենք իբրեւ առաջնորդող ու ուղարկութիւնը»:

Այդպէս էլ արաւ: Երբ 1892 թ., կարծեմ Փետրւարին, զուրս եկաւ յօդւածս «Հնչակ»-ում, իբրեւ առաջնորդող, կարելի էր երեւարկայել իմ հողարտութիւնը...:

Պէտք է ասեմ, «որ Ժընեւ վերապառնալուց անժիջապէս յետոյ և ամասնակցեցի այն «Յանձնախմբին», որը կազմւած էր Նազարեէկից, իւղան Բարսեղեանից և Սաքօ Ազամիրզեանից, և որի նպատակն էր՝ հրատարակել ընկերվարութեան վերաբերեալ ժաղովրդական գրքոյկ-ներ հայերէն լեզով։ Արդէն շատ տեղերից կեղբոնին գրում էին. «Աւղարկեցէք մեզի հայերէն տալւած զրքեր ընկերվարական վարդապետութեան մասին»։ Ս. Ազամիրզեանը աղուլեցի էր, ուսանում էր Փարփղի մօտի յայտնի Ecole d'Agriculture de Grignon-ի մէջ, իդէալիստ էր, անվերապահօքէն ընդունում էր ոչ միայն Նազարեէկի, այլ և Մարօի բոլոր ժաքերը, բոլոր ծրագիրները, բոլոր ասածները. քննադատական մտքի կատարեալ բացակայութիւն ու եւ է հնչակեանի վերաբերմամբ և բոլորովին կասկածամիտ ու եւ է ուրիշ կուսակցութեան պատկանողի հանդէպ։ Տնից ստացած իր ամսական-ների կէուը (ստանում էր Թիֆլիսի զրամատան մէջ ծառայող իր Եղ-րայրից) յանձնում էր ընկերվարական հրատարակչական ծախքերի համար. ճիշտէ՝ ես եւ միւսներն էլ մասամբ յատկացնում էինք, մեր անձնական միջոցներից, նոյն նպատակի համար։

Առաջին զրքոյկը հայերէն լեզով, որ արծարծում էր ընկերվարական զուտ անտեսական մի հարց՝ բանւորի չստացած «յաւելեալ արժէք»-ը՝ կազմում էր, բայ այն ժամանակների ընկերվարական ըմբոնումների, աշխատաղի եւ տիրոջ յարաբերութիւնների հիմնաքարը։ Դիկչոյէյնի զրած այդ ժողովրդական գրքոյկը կարդալուց յետոյ, մեր կարծիքով, մինչեւ իսկ կիսակիրթ հայ մշակը պիտի կարողանար ըմբոններ, թէ ինչո՞ւմն է բանւոր դասակարգի շահագործումը դործարանատիրոջ կողմէց։

Այդ եւ միւս զրքոյկները, որ հետագայում թարգմանեցինք ու հրատարակեցինք (Մարքսի եւ Էնդէլսի «Մանիֆէստ»-ը, Պ. Լաֆար-դի, Ժ. Գլուխի, Բէրէլի, Պէլիսանսի զրքերը կամ զրքոյկները), պարունակում էին այնպիսի մտքեր ու վարդապետութիւններ, որոնց համապատասխան հայերէն բառերը պակասում էին հայ հրատարակական կամ զիտական լեզվի մէջ։ Օրինակ, «plusvalue» բառը, որ Մարքսի տնտեսական տեսութեան հիմնաքարերից մէկն էր, երկար տառանումներից յետոյ՝ «չվարձւած արժէք» ասէնք, թէ՝ «յաւելցող արժէք», թէ՝ «յաւելեալ արժէք», ընդունեցինք այս վերջին ձեւը։ Զկային հայերէնում մէկ անդամ ընդ միշտ եւ որոշապէս ընդդունած ու թարգմանւած գոյականներ ու բայեր՝ ընկերային եւ քաղաքատնտեսական հարցերի վերաբերմամբ, որոնք հայութեան երկու հատւածների համար էլ ունենային միեւնոյն նշանակութիւնը եւ

յատակութիւնը։ Մի կողմից մենք անպատճառ ուղում էինք նոր պատահած օտար բառերի հայերէն թարգմանութիւնը, միւս կողմից, Մարքսի տնտեսական տեսութիւնները և «գիտական սոցիալիզմ»-ը կրում էր իր մէջ իւրայատուկ լմբոնումներ։ Անշուշտ, մենք գիտէինք, որ ո՞րքան էլ հարուստ լինէր գրաբառը, բայց եւ այնպէս ձ-րդ գարու լեզուն անկարող էր իր բառերով արտայայտել 19-րդ դարում ծնւած մտքերն ու իրերը։ Բացի այդ, կային բառեր, որոնք յատակ են միայն կամ պատմական որոշ շրջանին եւ այդ մի բառով ամբողջ շրջանն են յիշում (օր.՝ «սոմանթիզմի շրջան» և ոչ թէ «վիպագրական», «վիպական», «ցնորական» շրջան, եւայլն), եւ կամ բառեր՝ յատուկ միայն որոշ երկրի կամ ժողովուրդի համար։ Օր.՝ «սամովառ» սամովառ է եւ ոչ թէ «ինքնաեփ», թէեւ թարգմանութիւնը բառացի է։ ուուների կերած «բլինի»-ն «բլինի» է եւ ոչ «հացախող ուրակ»։ ինչպէս կատակօրին թարգմանել էին վաթսունական թւականների ուուսահայ գրադէանները։ «Դահկէ»-ն դահկէ է եւ ոչ թէ «սուրճ»։ Ամենազժւար բառն էր «Le capital» կամ գերմաներէն «Das kapital» և ուուներէն «Քափիրալ» բառը։ Գիտէինք, որ հայերէն գործածւած բառ կար՝ «գրամագլուխ», որը մասամբ իր մի կողքով արտայայտող բառ էր, որովհետեւ «գրամ»-ը յատկապէս «փող» մաքով է գործածւում։ այլ խօսքով, եթէ capital բառը թարգմանէինք «գրամագլուխ», խեղաթիւրած պիտի լինէինք քաղաքատնտեսութեան և գիտութեան մէջ ընդունւած le capital բառը։ ինչո՞ւ, որովհետեւ կարելի է capital ունենալ կամ capitaliste լինել առանց փող իսկ ունենալու, բաւական է, որ մարդ լինի սեփականատէր կալւածների, հանքերի, աների։ Ես այժմ էլ, յիսուն տարիներից յետոյ՝ չնայած, որ մեր պարբերական մամուլը անընդհատ գործածում է «գրամատիրական» ածականը կամ «գրամատիք դասակարգ», զանում եմ, որ թարգմանական այդ բառերի գործածութիւնը սիալ լմբոնումների է բերում։ Քաղաքատնտեսական և լնկերային գիտութիւնների լմբոնումներով՝ capital-ը ամփոփումն է բոլոր նիւթական արժէքների՝ հասնելով մինչեւ իսկ մտաւոր «քափիթալիստների»։ Գալով Մարքսի կամ «գիտական սոցիալիզմ»-ին, capital ը «բլուրեղացած աշխատանք» էր, մինչեւ իսկ ժամանակակից անտեսազիտական և լնկերաբանական տեսութիւնները, անկախ այն հարցից՝ ընդունում են մարքսեան գիլիսոսփայութիւնը, թէ չեն ընդունում, եթե գործածում են le régime capitaliste դարձւածքը՝ հասկանում են անտեսական կեանքի իւրայատուկ մի իրաւակարգ, ամփոփումն անտեսական, քաղաքական եւ իրաւական յարաբերու-

թիւնների՝ խոշոր արդիւնագործութեան հետ կապւած, մասսամբ ծըն-
ւած նրանցից :

Զկայ աւելի աննպատակ եւ ապերախտ կացութիւն, քան թէ երբ
հրապարակագիրը մի բան է գրում, ընթերցողը ուրիշ բան է հաս-
կանում. եթէ գրաւոր լեզուն բացատրելու եւ հասկցնելու համար չէ,
այլ եւ ընդհակառակը, գրողի արտայայտած միտքը խճողելու հա-
մար է, նա կորցնում է իր գոյութեան իմաստը. ու եթէ բոլոր քա-
քաքակրթւած աղջերի համար անպայմանօրէն ընդունւած են սա-
րատ, capitaliste բառերը, ինչի՞ց գրգւած մենք անպատճառ «գրա-
մագլուխ», «գրամատիրական» սիսալ բառերը պէտք է գործածենք.
«աղջասիրութի՞ւն» անելու համար», թէ՞ «կուսական մաքրութեան
մէջ պահելու մեր Մեծառքանչը», թէ՞, վերջապէս, որպէսպի «մեր
ժողովուրդը հասկնայ» :

Բացի այդ, մենք մեր ամէն քայլում նկատում էինք, որ 19-րդ
դարը ընթանում է եւ ընթանալու է ոչ միայն իր հիմնական գոյնե-
րով, այլ եւ այդ գոյների (լայն մտքով առնուում են այդ հասկացո-
ղութիւնը) բազում գունաւորումներով ու երանգներով: Եթէ քիմիան
հիմնական կարմիր գոյնին կից գտաւ հարիւրից աւելի կարմրագոյն
երանգներ, կամ հիմնական սեր գոյնին կից գտաւ մօտ 300 սեւագոյն
երանգներ, նոյնը նկատում էր եւ միւս մարզերում (Հոգեբանական,
փիլիսոփայական, մինչեւ իսկ՝ բնական գիտութիւնների մէջ): Մեր
թարգմանութիւնների ժամանակ մենք անում էինք կարելին, որ չե-
ցնենք մեր թարգմանութիւնները օտար բառերով: Երբ պատահում
էիք salariat բառը, թարգմանում էինք «վարձկանութիւն» բառով,
«chômage» «անգործութիւն» եւ «գործազրկութիւն», «intensité
économique» «տնտեսական ուժգնութիւն» եւ «տնտես. խոցում».
այդ բառը կրում էր իր մէջ երանգներ, մի տեղ պէտք էր «ուժգնու-
թիւն» ասել, որ միտքը յստակ լինի, միւս տեղ՝ «խոցում»: Դը-
ւարանում էինք թարգմանել socialiser բառը. socialiser la pro-
priété թարգմանում էինք սկզբում՝ «սեփականազրկել», յետոյ՝
«համայնացնել», յետոյ՝ «աղջայնացնել», որ համապատասխանում
էր նոյնպէս «nationaliser» հասկացողութեան բայց անդիմական «լո-
քառուր» բառը, որ Փրանսացիք էլ ընդունում էին, այնպէս էլ թո-
ղինք: Որքա՞ն բառեր, որոնք վերջին յիսուն տարիների ընթացքում,
մանաւանդ վերջին գաղթականական մեծ շրջանին գործածուում են
պարբերական մամուլում սիսալ մտքով: օր., փոխանակ «խոշոր ար-
դիւնաբերական շրջան»-ի՝ գործածում են «գրամատիրական շրջան»,
«արդիւնաբերական միջոցներ»՝ փոխանակ «արդիւնագործական մի-
ջոցներ» կամ «արտադրական միջոցներ» եւ այլ նման բառեր:

Բարեբախտաբար, մենք մենակ չմնացինք. Երբ մի քանի տարի յեսու Հիսուսի մատուցին հրատարակել «սոցիալիստական ըրոշիւներ», նրանք էլ մեզ պէս capital- ը «կապիտալ» էին թարգմանում և socialisme- ը՝ «սոցիալիզմ»։ Միայն վերջին մեծ տարագրութեան շրջանին, «Դրօշակ»-ը կամ դաշնակցական հրապարակագիրները որդեգրեցին «դրամագլուխ», «դրամատիբական համակարգ» բառերը, եւ ի զո՞ւր:

Այստեղ միջանկեալ պէտք է լիչեմ, որ օտար բառերի գործածումից (առօրեայ խօսակցութեան մէջ) խուսափում էին Քր. Օհանեանը, Վրթանէս Փափազեանը (ուսանողներ՝ Ժընեւում) *) եւ, ընդհակառակը, առատօրէն, մինչեւ իսկ չափազանց, օտար բառերի էր դիմում Յովինան Դաւթեանը։ Յիշում եմ Թաւրիզից իմ ստացած նրա նամակը. «... Դու էլ գիտես արդէն, որ եւրոպական գիշիրմատիայի չնական էքափիութացիան մեր վերաբերմամբ ինչ սխոփոփներ բերաւ, ու խոստացւած ոէֆումները ինչ եղան... » : Բայց յանցանքը Դաւթեանինը չէր, այլ Գրիգոր Արծրունուն, որ այդ լեզուվ ու աւելի եւս խոսցած՝ զրել էր 25 տարիներ։

VIII

Հնչակի կենտրոնը Աքենի է տեղափախուում. — Ծրագիր՝ կապեր հաստատելու եւրոպական ընկերվարական կուսակցութիւնների հետ։

48 տարիներ առաջ, ամբողջ տիեզերքում այնքան աղատ էր մարդկային կեանքը, որ յետ - պատերազմեան ընկերային - քաղաքական մղձաւանջի մէջ մէծացող մեր արդի սերունդը հազիւ թէ կարողանայ զաղափար կազմել։ Մինչեւ իսկ Թիւրքիայում, այսինքն՝ տիպար բռնակալական մի երկրում՝ թիւրքը, օտարազգին, «չ - յեղափախական հայը իրեն անհամեմատ աւելի աղատ էր զգում, քան թէ արդի թրքական պետութեան սահմաններում։ Դալով ցարական Ռուսաստանին, որը մեր երիտասարդական օրերում բանտ էր թրւում, համեմատած ներկայ խորհրդային քաղաքական - ընկերային

*) Վրանիս Փափազեանը լաւ ջուրակահար էր. սիրում էր պատմել հետաքրքրական դէպքեր. չէր բաքնում, որ սիրում էր «յօրինել» ու «չափազանցել»։ Սիրում էր գրականութիւնը, տաղանդաւոր գրող էր (նորավէպեր). յեղափոխական խառնածք չուներ. մեծ եղայրն է դաշնակցական յայտնի գործիչ Վահան Փափազեանին։

համակարգի հետ՝ այսօր ինձ երեւում է որպէս ազատ երկիր. եթէ մէկը փորձէ հակառակը ազացոյց տալ, ասել է թէ ծանօթ չէ ո՛չ նախկին, ո՛չ էլ ներկայ Ռուսաստանին։ Գալով Եւրոպայի մնացեալ Երկիրներին՝ քաղաքական ազատութիւնը մի այնպիսի բնական երեւյթ էր, ինչպէս օգը, որը չնշելիս մարդ չի էլ նկատում նրա գոյութիւնը։ Մի երկրից միւս երկիրը տեղափոխելիս, մինչեւ իսկ պէտք չկար անցագիրներ ներկայացնելու։ Հոչակաւոր քայլութեան միայն թիւրքիայի եւ Ռուսաստանի սահմաններից գուրս գալու կամ նելս մտնելու համար. այն էլ, յաճախ, զուտ ձեւականութեան ենթարկւած, եթէ ճանապարհորդը յատկապէս նկատւած էր որպէս այդ պէտութեան գէմ գործող յեղափոխական։ Յունաստանն էլ, իրեւ սահմանադրական - միապետական երկիր, իր ազգային սահմանադրական օրէնքներով ապահովում էր եւրոպացուն եւ իր քաղաքացիներին քաղաքական ազատութիւնները։

1891թ. աշնան Հնչակեան կուսակցութեան կեղլոնը վճռած էր տեղափոխւել Աթէնք՝ տանելով իր հետ եւ «Հնչակ» թերթը եւ ինչոր կապւած էր յեղափոխական գործունիութեան հետ։ Ինչպէս արդէն ակնարկած էի, Աթէնքը ամենամօտիկ վայրն էր, որտեղից կարելի պիտի լինէն ամէն տեսակ յարաբերութիւնները թրքահայաստանի գաւառների եւ Պոլսի հետ։ Անշուշտ, Բուլղարիան էլ հեռու չէր, իսկ Պոլսի վերաբերմամբ շատ մօտ եւ յարմար, բայց Բուլղարիայի կառուվարութիւնը այնքան էլ ազատ չէր քաղաքականորէն եւ ամրացած չէր նրա պետական անկախութիւնը։ Կային Հարթւած կողմէր թիւրքիայի և Ռուսաստանի հետ։ Գալով Յունաստանին՝ Հնչակի ներկայացուցիչները, յոյն ազգային հերոս Բոցարիսի օգնութեամբ, սոտցել էին բոլոր երաշխաւորութիւնները կառավարութեան կողմէց, որ Հնչակեան կենարոնը կարող է գալ ապրել, զբացւել իր քաղաքական գործունիութեամբ ու թերթ հրատարակել. ակնարկած էին միայն, որ «Հնչակ»-ը ոռւս կառավարութեան գէմ որողայթներ չսարքէ. յոյն թագաւորի կինը ոռւս յարական ընտանիքից էր՝ յարի եղոր աղջիկը։

Կային եւ այլ յարմարութիւններ։ Ինչպէս յիշեցինք, Յունաստանում աշխատում էին հազարի մօտ թրքահայ բանւորներ Կորնթոսի ջրանցքի պեղման վրա, եւ մի քանի հարիւր հողի՝ արծաթի հանքերում։ Ու. Խանաղատի նախաձեռնութեամբ եւ աջակցութեամբ կազմւել էին Հնչակեան մի քանի խմբեր, որոնց վրա Նազարբէկը ուղղում էր նայել իրեւ պահեստի ուժի։

Յունաստանը յարմար էր ճանաչւած նոյնպէս տ. Անուշի տւած

պէնքերի տեղափոխման ու Հայաստան ներմուծելու հարցի տեսակէտից : « Անշուշտ անում էր ինձ Ա. Նազարբէկիը, մենք մի ոտով Ասիայումն ենք լինելու ու համարեա թէ կորւած ենք լինելու Եւրոպայից, եւ գլխաւորը , անկարող պիտի լինենք ազգել Եւրոպական մամուլի ու Հայարակական կարծիքի վրա . բայց ես, Մարօն, ինչ պէս եւ մեր միւս ընկերները, կարծում ենք, որ դու պէտք է տեղափոխւես Փարիզ կամ Լոնտոն ու այստեղից կապեր Հաստատես Եւրոպական մամուլի ու քաղաքական գործիչների հետ, թէ եւ Լոնտոնը աւելի յարմար է եւ Անդլիան աւելի աղատ է ու անկախ ուրիշ երկիր ներից, քան թէ Ֆրանսիան, բայց Ֆրանս . Սոցիալիստական Կուսակցութիւնը ուժեղանում է օրից օր, մինչդեռ Անդլիայում Սոցիալիստական Կուսակցութիւնը հազիւ հաղ ծնուռմ է : Ի հարկէ, գերմանական սոցիալ - դեմոկրատները շատ ուժեղ են եւ պիտի օգնեն մեզ, ինչպէս արդէն յայտնել են Փէշիանովին, բայց գերմանական կառավարութիւնը տնտեսական մեծ ծրագիրներ ունի Թիւրքիայի վերաբերմամբ եւ հազիւ թէ լաւ աշքով նայէ ու եւ է մէկի վրա, եթէ, Բերլինում հաստատւած, սկսէ լրագրական պրոպագանդ սուլթանի դէմ» : «Փիտեմ», — շարունակում է Նազարբէկիը — « որ դու մի քանի ամսից պատրաստուում ես քննութիւնների ենթարկել համալսարանում, ուստի Մայիսից առաջ չես կարող տեղիցդ շարժւել, բայց փոյթ չէ, եթէ կէս տարի այսուեղ մնաս եւ աւելի կատարելագործւիս քո քիւմիական աշխատանքների մէջ, կարող է պատահել, որ քո քիւմիան մօտ առագայում շատ կարեւոր (ասում է ընդդած շեշտով) տեղ բոնէ մեր գործունէութեան մէջ . . . » :

Որ «քիմիան շատ կարեւոր» դեր կարող է խաղալ յեղափոխական գործունէութեան մէջ, ես ինքս էլ յաճախ մտածում էի այդ մասին : Մինչեւ իսկ, մի օր, Աղ. Աթարէկի սենեակում պատահմամբ ձեռքս էր ընկած խոալերէն լեզուվ խոալացի անխիստականների հըրսատարակած գրքոյկը, «Մէր միջոցներ՝ խօսքը եւ քիմիան (ուժանակը)» : Գրքոյկը դատարկ, ճոճոան ճառերից էր կազմւած . բայց գրքոյկի վերջին մասում մէջ էին բերւած «մեծ եւ փոքր ձեւերով պատրաստւած ուժանակի տաս Փոսմիւլներ» (պատրաստելու ձեւեր) . գրքոյկը տուն էի տարել եւ յաճախ մտածել այդ «Փոսմիւլներ» մասին՝ յուսով, որ մի օր էլ իմ քիմիական լաբորատուառում այնքան էլ գյւար չպիտի լինի մէջ բերւած փորձերը անել :

Նազարբէկի տոաջարկը ժամանակաւորապէս տեղափոխւել Փարիզ ու սերտ կապեր հաստատել Փրանսիական ընկերվարական գործքների հետ, որպէսպի Փրանս . ընկերվարական մամուլի ու կու-

սակցութեան միջոցով պաշտպանեմ հայ յեղափոխական գործը եւրո-
պական հասարակական կարծիքի առաջ, անակնկալ էր ինձ համար, ու
չատ հաճելի անակնկալ: Մի պահ եւ «կէս - բերան» հրաժարւեցի այդ
«դժւարին և խիստ պատասխանառու գործունէութիւնից, որ ուժե-
րիցու վեր է», բայց Նազարբէկը ծիծաղելով ասում է. «Մի՛ կոտուիր,
լաւ զիտես, որ եք մէկը կարող է այդ անել, միակ դու ես. մեր
միւս ընկերները պէտք են եւ անփոխարինելի ուրիշ կարեւոր գործե-
րի համար»: Համաձայնեցայ, որովհետեւ հաւատում էի, որ «եւ-
րոպական կարծիքը» նշանակալից եւ իրական ուժ է ու չէի կատ-
կածում, որ իրականութեան ընթացքը մի օր անդրդւելիորէն պիտի
հեգնէր իմ պատրանքները:

ԵՐԻՄԱՍԱՐԴ ԷՒ . . . :

